



Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland

His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish

Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցոյ Ծովի

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan

Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

Registered Charity No 1173403

t. +44 (0)20 7373 8133 Pastoral office email. info@styeoghiche.org.uk

www.styeoghiche.org.uk <https://www.facebook.com/StYeghiche>

SUNDAY BULLETIN

1: List of the Sunday Reading,


2nd December 2018

Bulletin No 50/18

Second Sunday of Advent

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ 1 ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 4:1-11

Ուրեմն, եղբայրներ, կը թախանձենք ձեզի ու կը յորդորենք ձեզ Տէր Յիսուսով, որպէսզի՝ ինչպէս ընդունեցիք մեզմէ թէ ի՛նչպէս պէտք է ընթանաք եւ հաճեցնէք Աստուած՝ ա՛լ աւելի ճոխանաք անոր մէջ, քանի որ գիտէք թէ ի՛նչ պատուէրներ տուինք ձեզի՝ Տէր Յիսուսով: Որովհետեւ Աստուծոյ կամքը՝ ձեր սրբացումն է, որ ետ կենաք պոռնկութենէ, ու ձեզմէ իւրաքանչիւրը գիտնայ իր անօթին տիրանալ սրբութեամբ եւ պատիւով. ո՛չ թէ ցանկութեան կիրքով, ինչպէս հեթանոսները՝ որ չեն ճանչնար Աստուած: Ո՛չ մէկը թող չափազանցէ այդ բանին՝ մէջ ու կեղեքէ իր եղբայրը, քանի որ Տէրը վրէժխնդիր է այդ բոլորին համար, ինչպէս մենք ալ նախապէս ըսինք ձեզի եւ վկայեցինք. որովհետեւ Աստուած կանչեց մեզ ո՛չ թէ անմաքրութեան, հապա՝ սրբութեան: Ուստի ա՛ն որ կանարգէ՝ կանարգէ ո՛չ թէ մարդ մը, հապա Աստուած՝ որ իր Սուրբ Հոգին ալ տուաւ մեզի:



Paul's Letter to Thessalonians

Իսկ եղբայրսիրութեան մասին պէտք չունիք որ գրեմ ձեզի, որովհետեւ դուք արդէն Աստուծմէ ստրված էք սիրել զիրար, եւ արդարեւ ասիկա կընէք ամբողջ Մակեդոնիայի մէջ եղող բոլոր եղբայրներուն հանդէպ: Մակայն կաղաչե՛նք ձեզի, եղբայրներ, որ ա՛լ աւելի ճոխանաք, ու պատի՛ւ համարէք հանդարտ կենալ, ձեր գործերով զբաղիլ եւ ձեր ձեռքերով աշխատիլ, (ինչպէս պատուիրեցինք ձեզի,) որպէսզի դուրսիններուն հետ վարուիք վայելչութեամբ ու ո՛չ մէկ բանի՝ պէտք ունենաք:

The Epistle of St Paul to the 1 Thessalonians 4:1-11

Living to Please God

As for other matters, brothers and sisters, we instructed you how to live in order to please God, as in fact you are living. Now we ask you and urge you in the Lord Jesus to do this more and more. For you know what instructions we gave you by the authority of the Lord Jesus.

It is God's will that you should be sanctified: that you should avoid sexual immorality; that each of you should learn to control your own body ^a in a way that is holy and honorable, not in passionate lust like the pagans, who do not know God; and that in this matter no one should wrong or take advantage of a brother or sister. ^b The Lord will punish all those who commit such sins, as we told you and warned you before. For God did not call us to be impure, but to live a holy life. Therefore, anyone who rejects this instruction does not reject a human being but God, the very God who gives you his Holy Spirit.

Now about your love for one another we do not need to write to you, for you yourselves have been taught by God to love each other. And in fact, you do love all of God's family throughout Macedonia. Yet we urge you, brothers and sisters, to do so more and more, and to make it your ambition to lead a quiet life: You should mind your own business and work with your hands, just as we told you,

2: A short interpretation of the Gospel reading under the title The hard sayings'

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԷՏԱՐԱՆԵՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 13:1-9

Այդ ատեն ներկայ եղողներէն ոմանք պատմեցին անոր այն Գալիլեացիներուն մասին, որոնց արիւնը Պիղատոս խառնեց իրենց զոհերուն հետ: Յիսուս պատասխանեց անոնց. «Կը կարծէ՞ք թէ այդ Գալիլեացիները աւելի մեղաւոր էին բոլոր Գալիլեացիներէն, քանի որ այսպիսի չարչարանքներ կրեցին: Կըսեմ ձեզի՝ ո՛չ: Հապա եթէ չապաշխարէք, բոլորդ ալ նոյնպէս պիտի կորսուիք: Կամ թէ այն տասնութ հոգիները, որոնց վրայ Սելովամի աշտարակը ինկաւ եւ սպաննեց զանոնք, կը կարծէ՞ք թէ անոնք Երուսաղէմ բնակող բոլոր մարդոցմէ աւելի յանցաւոր էին: Կըսեմ ձեզի՝ ո՛չ: Հապա եթէ չապաշխարէք, բոլորդ ալ նմանապէս պիտի կորսուիք»:



[Luke writing](#)

Սա՛ առակն ալ ըսաւ. «Մէկը իր այգիին մէջ ունէր տնկուած թզենի մը. եկաւ պտուղ փնտռելու անոր վրայ, բայց չգտաւ: Ուստի ըսաւ այգեպանին. “Ահա՛ երեք տարի է, որ կու գամ՝ պտուղ կը փնտռեմ այդ թզենիին վրայ, ու չեմ գտներ. ա՛լ կտրե՛՞ր զայն, ինչո՞ւ խափանէ գետինը”: Ան ալ պատասխանեց անոր. “Տէ՛ր, ա՛յս տարի ալ ձգէ զայն, մինչեւ որ բրեմ անոր շուրջը ու թրիք դնեմ: Եթէ պտուղ տայ՝ լա՛ւ. այլապէս՝ յետագայի՛ն կտրե՛ զայն”»:

The Holy Gospel of Jesus Christ according to Luke 13:1-9

Repent or Perish

Now there were some present at that time who told Jesus about the Galileans whose blood Pilate had mixed with their sacrifices. Jesus answered, “**Do you think that these Galileans were worse sinners than all the other Galileans because they suffered this way? I tell you, no! But unless you repent, you too will all perish. Or those eighteen who died when the tower in Siloam fell on them—do you think they were more guilty than all the others living in Jerusalem? I tell you, no! But unless you repent, you too will all perish.**”

Then he told this parable: “**A man had a fig tree growing in his vineyard, and he went to look for fruit on it but did not find any. So he said to the man who took care of the vineyard, ‘For three years now I’ve been coming to look for fruit on this fig tree and haven’t found any. Cut it down! Why should it use up the soil?’**”

“**‘Sir,’ the man replied, ‘leave it alone for one more year, and I’ll dig around it and fertilize it. If it bears fruit next year, fine! If not, then cut it down.’**”

Մեկնութիւն եւ պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

ՄԵՆՔ ՊՏՂԱՏՈՒԻ ԾԱՌԵՐ ԵՆՔ

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, ամէն.

Սիրելի քրիստոսասէր եղբայրներ եւ քոյրեր, Սուրբ Ծննդեան պատրաստութեան շրջանի՝ Յիսնակացի այս կիրակին մեզ յորդորում է արդիւնաւոր կերպով գործածել ժամանակը, չյետաձգել Աստծոյ կանչին տրուող մեր պատասխանը: Իսկ պատասխանն ինչպէ՞ս պիտի մատուցուի:

Աւետարանական այս հատուածը գալիս է մեզ օգնելու այս հարցում:

Քրիստոս առակաւոր կերպով մարդուն նմանեցնում է ծառի, որ տնկուած է պտուղ տալու համար: Եւ ահա այգու տէրը, երբ երեք տարի շարունակ փնտրում ու պտուղ չի գտնում, ծառը կտրելու հրաման է տալիս այգեգործին: Բայց այգեգործը խնդրում է սպասել մէկ տարի եւս՝ խոստանալով փխրեցնել, պարարտանիւթ տալ՝ յուսալով, որ յաջորդ տարի թերեւս բերք կը տայ:

Մենք եւս եկեղեցու այգու մէջ տնկուած թզենիներ ենք: Անպտուղ թզենին այն հաւատացեալն է, որ լուրջի չի առնում իր քրիստոնէայ լինելը եւ պտուղ չի տալիս, Աստուած գոհ չի մնում եւ մեր կտրուելը ժամանակից է կախուած լինում. պէտք է պտուղ տալ: Իսկ ինչպիսի՞ պտուղ է պէտք տալ, ո՞րն է Տիրոջ հաճելի պտուղը: Աստծուց մեզ տրուած հոգեւոր սերմի ծաղկումն է պտուղը: Մեր պտուղը մեր խօսքն է, միտքը, մեր ձեռքերի աշխատանքը, մեր սէրը, հաւատքը: Այսօրուայ առաքելական նամակը եւս այս ակնարկն է անում. “Աստծոյ կամքն այս է, որ դուք սուրբ լինեք,

3: List of the Feasts celebrated in the Armenian church

հեռու մնաք պոռնկութիւնից, ձեզնից իւրաքանչիւր ոք գիտենայ իր մարմինը պահել սրբութեամբ ու պատուով եւ ոչ թէ ցանկութեան կրքով, ինչպէս հեթանոսներ, որ չեն ճանաչում Աստծուն" (ԱԹեսադ. 4:3-5) Աստուած ուզում է, որ մենք լաւ ու պտղաւատ ծառեր լինենք: Մեր մարմինը, մտքերը, լեզուն, սուրբ պահելը, բարի գործերը, ներելն ու չղատելը են այդ պտուղները: Իրենց քրիստոնէայ դիտող որքա՛ն մարդկանց գիտէք, որ Աստծոյ խօսքին ծանօթ են, բայց ապրում են չիմացողի պէս: Սուրբերը ցոյց են տալիս, թէ ինչպէս պէտք է լինեն հաւատի մարդիկ: Իրենք հրեշտակ չէին, այլ մեզ պէս էին՝ մսից ու ոսկորից: Բայց Աստծով իրենց մէջ յաղթեցին իրենց վատ մասին: Որոշ մարդիկ գիտակցելով շարունակում են անպտուղ կենցաղը եւ ասում՝ Աստուծոյ ողորմութիւնն անսահման է: Անսահման չէ մեր կեանքը: Երեք տարուայ այս խորհուրդի մէջ Քրիստոսի երեք տարուայ ապաշխարութեան քարոզն է, անգամ խաչի վրայ նրանց համար աղօթքն է: Քրիստոսի խաչի բարեխօսութեան արդիւնքում տրուած շրջանը հրեաները չօտագործեցին, ինչի արդիւնքում Երուսաղէմն աւերուեց եւ տաճարը կործանուեց: Յիշենք, որ մեր մարմիններն էլ Աստծոյ Սուրբ Հոգու տաճար են: Մեր ժամանակն էլ անվերջ չէ: Այն օրերին հրեաներին խորհրդանշող թզենու վրայ պտուղ փնտրող եւ չգտնող Քրիստոս անիծում է թզենուն եւ այն չորանում է: Տէրն ասում է. "Եթէ չապաշխարեք, ամենքդ էլ նոյնպէս պիտի կորչէք" (Ղուկ. 13.3): Իրենց անհաւատ կոչող մարդիկ քիչ են: Նոյնպէս քիչ են իրական պտուղ տուող հաւատացեալները:

Քրիստոսի եկեղեցին, խոստովանութեան բրիչով եւ ապաշխարութեան պարարտանիւթով փխրեցնում է մեր սիրտը, պատարագներով եւ աղօթքներով բարեխօսում, որ Տէրը ների մեզ եւ դեռ համբերութեամբ սպասի մեր պտուղներին:

Աստուած սպասում է ու դեռ ներում: Մարդիկ երեք անգամ խաբած մարդուն դժուար թէ վստահեն չորրորդ անգամ: Բայց Աստուած տալիս է այդ հնարաւորութիւնը, եւ ինչպէս սուրբ Պօղոս առաքեալն է ասում. "Ժամանակը ծախու առէք, քանզի օրերը չար են" (Եփ.5.16):

Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Աղապետդեան

Մ.Գենարիոս եպիսկոպոսի և Մերկերիոս զինվորի հիշատակության օր

Գենարիոս անունը լատիներեն Յանվարիոս է, իսկ իտալերեն՝ Կենարո: Ենթադրվում է, որ ծնվել է երրորդ դարի սկզբին: Ծնողները հարուստ և ճանաչված էին: Եղել է Իտալիայի Բենեվենտ քաղաքի եպիսկոպոսը: Դիոկղետիանոս կայսեր հալածանքների ժամանակ ձերբակալվել է և 305-ին նահատակվել: Նահատակության ժամանակ սրբի թափված արյունը մինչև օրս պահպանվում է Նեապոլի եկեղեցում՝ հատուկ փոքր սրվակի մէջ:

Մերկերիոսը հռոմեական բանակի քաջ զինվորներից էր: Նա հոր նման Աստծուն էր պաշտում: Ի պատիվ հաղթանակի, Դեկոս կայսրը նրան կանչել է Արտեմիսի տաճարում զոհ մատուցելու: Մերկերիոսը հրաժարվել է: Նրա ձեռքերը կապել են և կրակի վրա այրել, սակայն հաջորդ օրը նա կենդանի ու բուժված է եղել և վկայել, որ Աստված է իրեն փրկել: Այդ ժամանակ կայսրը հրամայել է շիկացած շամփուրներով այրել նրա մարմինը և կտրել գլուխը: Սուրբ վկան 250 թվականին նահատակվել է:

Commemoration of the Apostles St. Thaddeus and St. Bartholomew, the first preachers of Christianity in Armenia

Apostles St. Thaddeus and St. Bartholomew were two of the twelve Apostles of Christ, who came to Armenia and preached Christianity in Armenia deserving the title "the first illuminators". Still at the dawn of Christianity they were martyred in Armenia. It was the result of their preaching and martyrdom that the Armenian people, being the first nation in the world, proclaimed Christianity as the state religion. Indeed, Apostles St. Thaddeus and St. Bartholomew played an important role in the history of 2000-year-old Christian Armenian nation which has unshaken faith and keen love towards its Mother Church.

Each year a Divine Liturgy is celebrated in the Cathedral of the Mother See of Holy Etchmiadzin in the memory of St. Apostles.

30th Anniversary of the EARTHQUAKE in Spitak, Armenia.

On Sunday 9th December the Armenian Nation will be remembering victims of the worst earthquake in the history of Armenia where more than 55 thousand of our compatriots perished. Special Episcopal service will be held at St Yeghiche Armenian Church starting at 11:00 am, remembrance prayers will follow Divine Liturgy.

4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By Jacqueline, Setrag, Lucine and Zora Karanfilian for the soul of their Mother and Grandmother the late **NELLY HOVSEPIAN (Նելլի Հովսեփեան)** on the 2nd anniversary memorial of her passing, also for all the old and new deceased members of the **HOVSEPIAN, KARANFILIAN, AF-TANDILIAN** and **SHAHGALDIAN** Families.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Please Pray For Our Sick: Including **Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another**

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Ձեր ամեն տեսակի հոգեւոր կարիքներուն եւ Խորհրդակատարութիւններուն՝ Տնօրինէքի, հիւանդի այցելութեան, Սբ Հաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռաձայնեցէք Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեանին 07548 777 147:

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or **020 7373 8133** or by emailing info@styeghiche.org.uk Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

Requiem Service (Hokehankisd)

For Requiem Service (Hokehankisd), please call the church office at **020 7373 8133**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated.

Please remember our Church in your prayers.

Your kind donations are gratefully accepted:

ANNOUNCEMENT:

In order to meet the ever increasing church functioning expenses, The St Yeghiche Parish Council would like to appeal to all members of the community for their annual membership dues and generous donations. Please complete this form and hand your donation to the members of the Parish Council at the side entrance of the Church. Alternatively please post your cheque to: St Yeghiche Armenian Church Parish c/o Dr. Setrag Karanfilian, 13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB. Please make your cheques payable to: "St Yeghiche Armenian Church".

Alternatively you can arrange a standing order or donation by bank transfer to our St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at:

HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

I wish to arrange a standing order/make a donation £to St Yeghiche Armenian Church Parish.

Name:

Address:

Tel:.....Email:.....

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403. Please complete a Gift Aid Form with your donation. Forms available from Parish Council.